

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊՈՒՇԿԻՆՈ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

***ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐ***

Կազմել է համայնքի ղեկավար՝ Ս Ավետիսյանը
հաստատվել է՝ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 22 ի

Թիվ17 նիստի N 24-Ն որոշմամբ

Պուշկին -2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն 3

2. Համառոտ տեղեկատվություն 4

Պատմական ակնարկ 4

3.Պուշկինո համայնքի տեսլականը 4

4. Սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություն 4

5. Հիմնահարցերի բացահայտում և վերլուծություն 4

6. Առաջնահերթ հիմնահարցերի վերլուծություն 4

7. Ռազմավարության սահմանում 4

1. Ներածություն

Համայնքի սոցիալ - տնտեսական զարգացման ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքապետի և նրա աշխատակազմի կողմից քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից, դրվում է գործողության մեջ: Ծրագիրը ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության, սոցիալ-տնտեսական , ներքին իրավիճակի համալիր գնահատման, առկա և ներուժային հնարավորությունների (բնական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային) հաշվառման արդյունքում:

Ծրագիրն ավելի իրատեսական դարձնելու համար գնահատվել են նաև ֆինանսական ռեսուրսները և առաջարկված ծրագրերից ակնկալվող արդյունքները:

2. Պատմական ակնարկ

Լոռու մարզի Պուշկինո համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս – արևմտյան մասում, Բագումի և Վիրահայոց լեռնաշղթաների միջև, ծովի մակերևույթից 1600-1800մ բարձրության վրա : Ուի հի բարեխառը կլիմա, օդի տարեկան միջին ջերմաստիճանը +8 աստիճան է, գարունը կարճատև է, բուռն անձրևային, ամառը երկարատև է, համեմատաբար զով, շրջակա անտառները մշտապես թարմ օդ են մատակարարում համայնքին: Տեսական ու մեղմ է նաև աշունը, տարեկան տեղումների միջին քանակը կազմում է 200-520մմ:

Համայնքի վարչական տարածքը 7450 հա է, մշտական բնակչությունը՝ 298մարդ: Համայնքը սահմանակից է Լոռու մարզի Գարգառ համայնքին::

Գյուղամիջյան պուրակում տեղադրված է ՀՄՊ զոհերի հուշարձանը: , համայնքում կա խաղահրապարակ, հանգստի գոտի, մերձակա անտառային գոտիներ, կան սառնորակ աղբյուրներ, որոնք գտնվում են գեղատեսիլ վայրերում:

Պուշկինո համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, բուսաբուծությամբ, մեղվապահությամբ:

3. Պուշկինո համայնքի տեսլականը

Պուշկինո համայնքը առաջիկա հինգ տարիների ընթացքում ակնկալում է բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, օգտագործելով սեփական ռեսուրսները և պետական աջակցությունը: Համայնքի երիտասարդ սերնդի մշակույթային, սպորտային պայմանների ապահովման համար:

Լինելով հանրապետության հյուսիս-արևմտյան շրջանի համայնք, անհրաժեշտ է ունենալ ուժեղ համայնք, որը կնպաստի մեր պետության կայացման և հետագա զարգացման գործընթացին:

Գտնվելով այս դժվարին ժամանակահատվածում անհրաժեշտ ենք համարում ներդնելով բոլոր կարողությունները այս հինգ տարիների ընթացքում կատարել բարեփոխումներ և մեր սերունդների համար ստեղծել ավելի բարեկարգ պայմաններ:

4. Սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություն

4.1. Իրավիճակն ըստ ոլորտների

4.1.1. Ժողովրդագրություն և միգրացիա

Համայնքը կազմված է256 տնային տնտեսություններից, որից առկա է129-ը: Մշտական բնակչությունը (01.01.16 դրությամբ) կազմում է298 մարդ: Առկա բնակչության թիվը կազմում է328, որից 152-ը տղամարդ, 146-ը՝ կին:

ՊՈԻՆԿԻՆՈ համայնքի առկա բնակչությունը ըստ տարիքային խմբերի և սեռի¹

	Ընդամենը	Այդ թվում, կանայք
1. Մինչև 1 տարեկան	7	4
2. 1-2 տարեկան	10	6
3. 3-4 տարեկան	11	5
4. 5-6 տարեկան	12	5
5. 7-10 տարեկան	33	16
6. 11-14 տարեկան	22	14
7. 15-17 տարեկան	31	12
8. 18-22 տարեկան	17	12
9. 23-45 տարեկան	70	33
10. 46-62 տարեկան	66	43
11. 63 և ավելի տարեկան	55	27
Ընդամենը	328	160

Պուշկինո համայնքում առկա է սոցիալապես խոցելի բնակչություն: Բնակիչներից 10-ը ունեն 2-3-րդ խմբի հաշմանդամություն: Ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկված է 42 ընտանիք , 12 ընտանիք բազմազավակ է (երեք և ավելի երեխա ունեցող), կենսաթոշակառուների թիվը կազմում է 55 մարդ (որից 27 կին): Համայնքը չունի առանց ծնողական խնամքի մնացած երեխա: Միակողմանի ծնողագուրկ է 1 երեխա: Միայնակ չաշխատող կենսաթոշակառուները 3-ն են:

Մինչև 6 տարեկան երեխա ունեցող տնտեսությունների թիվը25 -ն է : 2015 թ. համայնքում արձանագրվել է7 կենդանի ծնունդ, 2 մահ: :Պուշկինո համայնքում գրանցվել է ընդամենը 3 ամուսնություն. ամուսնալուծություն 0:

2015 թ-ին համայնքից մշտական բնակության նպատակով մեկնողներ՝ 7, միևնույն ժամանակ համայնք են տեղափոխվել՝ 6 մարդ, արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը 3 մարդ:

4.1.2. Զբաղվածություն

Համայնքի զբաղված բնակչության թվաքանակը մոտ 168 է, որից 125-ը ընդգրկված է գյուղատնտեսական գործունեության մեջ (ինքնազբաղվածություն և վարձու աշխատանք): Ոչ գյուղատնտեսական ոլորտում ընդգրկված է 43 մարդ: Մասնավորապես, պետական մարմիններում ընդգրկված է 27 մարդ, համայնքի աշխատակազմում զբաղված է 5 աշխատող (2 համայնքային ծառայող), 1 հայեցողական, 1 տեխնիկական սպասարկման պաշտոն զբաղեցնող: Պուշկինո համայնքը ունի 1 հիմնական դպրոց, որտեղ սովորում են 56 աշակերտ, աշխատողների թիվը կազմում է 18 մարդ, հիմնականում համալրված է բարձրագույն կրթությամբ մանկավարժներով: Համայնքը ունի 1 բուժ կետ որն ունի մեկ բուժքույր: Համայնքը չունի մշակույթի տուն, համայնքի բնակիչներից բանակում ծառայողների թվաքանակը 2 է, որոնք բոլորը գտնվում են պարտադիր զինվորական ծառայության մեջ:

Պուշկինո համայնքում գործում է 1 առևտրի կետ, որտեղ զբաղված է 1 մարդ, :

Համայնքում չեն գործում սոցիալական ծառայություններ, նոտարական գրասենյակ, ԶԱԳՍ-ի բյուրո, աղետների ռիսկերի նվազեցման համակարգող մարմին և այլ կառույցներ: Թվարկված ծառայությունները հասանելի են Պուշկինո համայնքից 15 կմ հեռավորության վրա գտնվող մարզկենտրոն՝ Ստեփանավանում:

Գյուղատնտեսական զբաղվածությունը համայնքում արդյունավետ չէ և դա լրջագույն պատճառ է հանդիսանում դեպի Ռուսաստան արտագնա աշխատանքի մեկնողների թվի տարեցտարի ավելանալու հարցում: Արտագնա աշխատանքի մեկնողները հիմնականում գյուղի երիտասարդ ընտանիքներն են:

4.1.3 Հողօգտագործում և գյուղատնտեսություն

Պուշկինո համայնքի վարչական տարածքը կազմում է 7450 հա, որից 5877 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերը:

Վարելահողերը կազմում են 351 հա, որից սեփականաշնորհված 268 հա-ը պատկանում են համայնքի բնակիչներին, իսկ 83 հա-ը համայնքային նշանակության են, որից 50 հա ամբողջությամբ տրված են վարձակալության, համայնքի խոտհարքները կազմում են 551 հա որից 284 հա պատկանում է բնակչությանը:

Գյուղատնտեսական այլ հողատեսքերը կազմում են 494 հա, որոնցից 58 հա-ը՝ համայնքային սեփականության հողեր է, իսկ 436 հա-ը՝ պետական հողեր, :

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և հողագործությամբ: Մշակվող հողատարածքներից ցածր բերք է ստացվում, որի պատճառը հիմնականում ոռոգման ջրի բացակայությունն է, կարկտահարությունը, երաշտը:

Պուշկինո համայնքի հողային ֆոնդը ըստ նպատակային նշանակության և սեփականության սուբյեկտների

	Հողերի նպատակային նշանակությունը	Ընդամենը , հա	ՀՀ քաղաքացիների հա	Իրավաբանական անձանց	Համայնքային, հա	Պետական, հա
1.	Գյուղատնտեսական	5877	553.23		910	4413.89
2.	Բնակավայրերի	85.55	62.64	0.11	21.42	1.38
3.	Արդյունաբերական և ընդերքօգտագործման	14.86	0,14		14,72	
4.	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ	1.06		0,08	-	0,89
5.	Հատուկ պահպանվող տարածքներ	12,49	-	-	1,12	11,37
6.	Հատուկ նշանակության	-	-	-	-	
7.	Անտառային	1275,04	-	-	-	1275.04
8.	Ջրային	65,6	-	-	0,24	65,36
9.	Պահուստային	-	-	-	-	-
10.	Ընդամենը	7450,38	616,01	0,19	947,58	5886,60

Հողային ռեսուրսներ: Մեկ ընտանիքին բաժին ընկնող վարելահողերի տարածքը կազմում է ընդամենը 1,5 հա: Գյուղատնտեսության արտադրության կազմակերպմանը լրջորեն խոչընդոտում են բնակլիմայական պայմանները, գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը և գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարման տարբեր ձևերի արմատավորման դանդաղ ընթացքը:

Տնամերձերում, որը կազմում է 57 հա, բնակիչները աճեցնում են 10 հա կառտոֆիլ բանջարբոստանային մշակաբույսեր, :

Գյուղատնտեսական մեքենայացում: Համայնքում առկա է 6 անվավոր և թրթուրավոր տրակտոր,

	Գյուղ. մեքենաներ և գործիքներ	Քանակը		
		համայնքային սեփականության	մասնավոր սեփականության	կոոպերատիվ
1.	Բեռնատար ավտոմեքենա		4	
2.	Տրակտոր		4	
3.	Այլ գյուղ. մեքենաներ, գործիքներ		2	

Անասնապահություն: Պուշկինո համայնքում առկա է 573 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից՝ 351 գլուխ կով, մանր եղջերավոր անասուններ՝ 17գլուխ, խոզեր՝ 33գլուխ, մեղվափերթակ՝ 72հատ, թռչուն՝ 412հատ: Համայնքում արտադրվում է գյուղատնտեսական մթերքներ՝ կաթ, միս, բուրդ, ձու, մեղր:

Անհրաժեշտ է ստեղծել կաթի, մսի մթերման կետեր, որը հնարավորություն կտա զարգացնել անասնապահությունը:

Համայնքի սեփականությունը և բյուջեն

Համայնքի բյուջեն հիմնականում ձևավորվում է հողի հարկից, գույքահարկից, համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներից, գույքի վարձակալության եկամուտներից և պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայից, նպատակային հատկացումներից (սուբվենցիաներ): Թեև 2016թ. -ի համայնքի բյուջեի պլանավորված եկամուտները 2015թ. -ի փաստացի եկամուտների նկատմամբ ունեն շատ պոքր աճ , պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները 3,5 մլն դրամ է: Պուշկինո համայնքն ունի ապառքներ հողի հարկի՝ եվ գույքա հարկի՝ գծով:

Պուշկինո համայնքի 2016թ.-ի բյուջեի փաստացի եկամուտները

	Եկամտատեսակներ	Ընդամենը	Վարչական բյուջե (հազ.դրամ)	Ֆոնդային բյուջե (հազ.դրամ)
	Տարեսկզբի մնացորդ	0	0	1064.9
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)			
	Որից սեփական եկամուտներ			
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ, այդ թվում	2920.1	2920.1	x
1.1	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	2506.1	2506.1	x
1.2	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների			x
1.3	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	390.0	390.0	x
1.4	Տեղական տուրքեր	24	24	x
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ, այդ թվում	4.012	4012.0	
2.1	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ, Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ)	3.5	3.5	x
2.2	Պետական բյուջեից համայնքի վարչ. բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	0.512	0.512	x

2.3	Այլ դոտացիաներ			0.0
3.	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ . այդ թվում	0	0	x
3.1	Գույքի վարձակալությունից եկամուտներ, այդ թվում համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ			x
3.2	Տեղական վճարներ			x
3.3	Այլ եկամուտներ	0	0	x

Պուշկինո համայնքի 2017թ.ի պլանավորված բյուջեի եկամուտները
(հազ.դրամ)

Տարեսկզբի մնացորդ	Եկամտատեսակներ	Ընդունված բյուջե	Վարչական մաս	Ֆոնդային մաս
	ԸՆԴԱՄՍԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)²	7785.0	7785	0.0
	Որից սեփական եկամուտներ			0. 0
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ			x
1.1	Հողի հարկ	2851.0	2851.0	x
1.2	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար			x
1.3	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	564.2	564.2	x
14	Տեղական տուրքեր	24.0	24.0	x
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	3500.0	3500.0	0.0
2.1	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ			x
2.2	Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ			x
3.1	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ	585.0	585.0	x

Աղյուսակ 7

Պուշկինո համայնքի 2016թ.-ի պլանային բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման.

Բյուջետային ծախսերի անվանումները	ընդամենը (հազ.դրամ)	Այդ թվում (հազ.դրամ)
----------------------------------	---------------------	----------------------

			Վարչական բյուջե	Ֆոնդային բյուջե
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	8849.9339	7785.0	1064.9339
1	Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ, այդ թվում	0		
1.1	Կառավարում	7480.600 0	6980.6	500.0
1.2	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	5.0	5.0	0.0
2.	Տնտեսական հարաբերություններ	0.0		0.0
2.1	Գյուղատնտեսություն	0.0	0.0	0.0
2.2	Ճանապարհային տրանսպորտ	0.0		0.0
3.	Շրջակա միջավայրի պահպանություն, աղբահանություն	0.0		0.0
4.	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	664.9339 0.0		664.9339
4.1	Ջրամատակարարում	0.0		664.9339
4.2	Փողոցների լուսավորում	0.0		0.0
5.	Սշակութային ծառայություններ	0.0	0.0	0.0
6.	Նախադպրոցական կրթություն	0.0		0.0
7.	Սոցիալական արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	390.0	390.0	
8.	Պահուստային ֆոնդ	389.4 0	389.4	0.0

2016թ. բյուջետային ընդհանուր ծախսերը պլանավորվել են 8849.9339 հազ. դրամ: Համայնքապետարանի ֆինանսական կարողությունները հնարավորություն չեն տալիս միջնաժամկետ հատվածում իրականացնել (կամ սկսել իրականացնել) համայնքի կողմից առաջնահերթ ճանաչված ՏԻՄ լիազորությունների շրջանակում գտնվող ոչ ծավալուն ենթածրագրերը:

Համայնքը պատրաստ է բաժնեմասային մասնակցություն ունենալ դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող կապիտալ ներդրումային ծրագրերին, որի համար ֆինանսական աղբյուր կարող է հանդիսանալ համայնքի արտերկրում բնակվող համազուգահեռներից ստացվող միջոցները:

4.2. Ներքին և արտաքին գործոնների վերլուծություն

Ուժեղ (SWOT) վերլուծություն (ուժեղ և թույլ կողմեր)

Ներքին	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> • Անտառին մոտ լինելը • Անասնապահության զարգացման նպաստավոր պայմանների առկայություն • Հողային մեծ տարածքի առկայությունը • Գեղատեսիլ վայրերը 	<ul style="list-style-type: none"> • Ճանապարհների մի մասի անբարեկարգ լինելը • Ոռոգման ջրի բացակայություն • Խմելու ջրագծի մաշվածությունը • Սարամասեր տանող ճանապարհի ոչ բարվոք վիճակը

Ուժեղ (SWOT) վերլուծություն (հնարավորություններ և վտանգներ)

Արտաքին	
Հնարավորություններ	Վտանգներ
<ul style="list-style-type: none"> • Գյուղատնտեսական բերքի մթերման և վերամշակման զարգացում • Կաթի, մսի մթերման կետի ստեղծում 	<p>Խմելու ջրագծի անմխիթար վիճակը Բնական աղետներ՝ սողանքներ, սելավներ, երաշտ, կարկուտ</p>

5. Հիմնահարցերի բացահայտում և վերլուծություն

Համայնքի հիմնահարցերը

- Խմելու ջրագծի ներքին ցանցի կապիտալ վերանորոգում
- Գազիֆիկացման ընդլայնում
- Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում

Առաջնահերթ հիմնահարցերի վերլուծություն

Աղյուսակ

Հիմնահարցերի պատճառահետևանքային վերլուծություն և քարտեզագրում ըստ պատկանելության

Հիմնահարց	Պատճառ	Հետևանք	Այլընտրանքային լուծումներ	Պատկան մարմին/ դոնոր կազմակերպություն
Գազիֆիկացման ընդլայնում	• Ֆինանսների կայություն բացա	• Բնակչության կենցաղային մակարդակի բարելավում	• Անհրաժեշտ է պետական աջակցություն	<ul style="list-style-type: none"> • ՀՀ Կառավարություն • Համայնքապետարան • Դոնոր կազմակերպություններ • Բարերարներ
Խմելու ջրագծի ներքին ցանցի կապիտալ վերանորոգում	• Ֆինանսների բացակայություն	• Ջուրը կբախշվի բոլորին հավասարաչափ	• Անհրաժեշտ է պետական աջակցություն	<ul style="list-style-type: none"> • ՀՀ կառավարություն • Համայնքապետարան • Դոնոր կազմակերպություններ
Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում	ֆինանսների բացակայություն	• Ճանապարհների բարելավում, տրանսպորտի անխափան աշխատանք	• Անհրաժեշտ է պետական աջակցություն	<ul style="list-style-type: none"> • ՀՀ կառավարություն • Համայնքապետարան • Դոնոր կազմակերպություններ •

7. Ռազմավարության սահմանում

Համայնքի սոցիալ - տնտեսական զարգացման ծրագիրը ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել բարեկարգ և գրավիչ բնակավայր, զարգացնել գյուղատնտեսության ավանդական ճյուղերը /անասնապահություն, բուսաբուծություն/: Համայնքում պայմաններ ստեղծել անասնապահական արտադրանքի իրացման դժվարությունները հաղթահարելու համար:

Ծ Ր Ա Գ Ի Ր 1

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1960-ական թվականներին: Այն տարիների ընթացքում մաշվել է և տեղիք է տալիս ջրի զգալի քանակի կորստին: Կատարվել են ջրագծի ընթացիկ վերանորոգումներ, սակայն այն տվել է հարցի լուծման մասնակի արդյունք:

Համայնքի հրատապ խնդիրներից է խմելու ջրի ջրագծի հիմնական վերանորոգումը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ապահովել համայնքը շուրջօրյա ջրով:
- Նվազեցնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստները:
- Կանխել կեղտաջրերի ներթափանցումից առաջացող սուր վարակիչ հիվանդությունները:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է կնքել պայմանագիր Հայաստանի սոց. ներդրումների հիմնադրամի հետ, որի կողմից կներդրվի անհրաժեշտ գումարի 90%-ը, իսկ մնացած 10%-ը կներդրվի համայնքի կողմից:

Մասնագետների հաշվարկով ծրագրի իրականացման համար անհրաժեշտ գումարը կազմում է 20 մլն դրամ:

Ծ Ր Ա Գ Ի Ր 2

ԳԱԶԻՖԻԿԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՅՆՈՒՄ

Համայնքում կա 256 առանձնատուն, որից գազիֆիկացված է 34 տնտեսություն: Գազ չկա նաև Պուշկինոյի հիմնական դպրոցում:

Գազիֆիկացման ընդլայնման համար մասնագետների հաշվարկով անհրաժեշտ է 25 մլն դրամ, որը հնարավոր չէ ներդնել սեփական միջոցներով: Միևնույն ժամանակ գազիֆիկացման ընդլայնումը անհրաժեշտ է մոտակա անտառների հատումը կասեցնելու համար:

Ծ Ր Ա Գ Ի Ր 3

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է.

- Ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ տարվա բոլոր եղանակներին:
- Վերացնել փողոցների ջրափոսերը:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Համագործակցելով դոնոր կազմակերպությունների հետ՝ կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:
- Կատարել ավագի, խճաքարի փռում համայնքի փողոցներում:
- Աշխատանքներն իրականացնել 2018-2019թ.թ. ընթացքում:

Հավելված 1. Մեթոդաբանություն

1. Ծրագրի մշակման քայլերը և սկզբունքները

ՀԶԾ-ն մշակվում է համայնքի բնակչության կողմից: ՀԶԾ-ի մշակման գործընթացին բնակիչների մասնակցությունն ապահովվում է համայնքային ընդհանուր ժողովների քննարկումների միջոցով:

ՀԶԾ-ի մշակման գործընթացն իրականացվում է հետևյալ քայլերով

1. Նախապատրաստական աշխատանքներ,
2. Համայնքի տեսլականի ձևակերպում,
3. Սոցիալ- տնտեսական իրավիճակի վերլուծություն,
4. Հիմնահարցերի բացահայտում և վերլուծություն,
5. Նպատակների սահմանում,
6. Միջնաժամկետ ծրագրեր,
7. Ծրագրերի մշակում

1.1. ՀԶԾ-ի մշակման հիմնական սկզբունքները.

- **Մասնակցային.** Գործընթացին մասնակցում է համայնքի բնակչությունը և բնակչության ներկայացուցիչների խմբերը, որոնք կամավորության սկզբունքով ձևավորվում են համայնքի ընդհանուր ժողովի կողմից; Աշխատանքային այս ձևաչափը ապահովում է գործընթացի թափանցիկությունը և հաշվետվականությունը: Համայնքի բնակչությունից բացի մասնակցում են նաև համայնքից դուրս գտնվող շահագրգիռ կողմերը՝ մարզպետարան, կառավարություն միջազգային և դոնոր կազմակերպություններ, հասարակական միավորումներ, գործարարներ և այլն:
- **Համատեղելի.** Հաշվի են առնվում հանրապետական, մարզային և հարևան համայնքների շահերը:
- **Փոխընդանուր.** Հաշվի են առնվում հարևան համայնքների առկա հնարավորությունները:
- **Համաձայնողական.** Տարակարծությունները հարգվում են և որոշումները կայացվում են փոխզիջումային սկզբունքով:
- **Հետադարձ կապի.** Քայլերն ունենալով որոշակի հաջորդականություն՝ պարբերաշրջանային են:
- **Ճկուն.** Իրավիճակի ցանկացած փոփոխություն հնարավոր է ներառել:
- **Շարունակական.** Ծրագրի մշակման և ընդունման մասնակցային մեխանիզմները (հաստատվում են ավագանու և համայնքի ընդհանուր ժողովի կողմից) ապահովում են ծրագրի շարունակականությունը:

2. Նախապատրաստական աշխատանքներ

ՀԶԾ-ի մշակման գործընթացը ներառում է հանրային կառավարման երկու մակարդակում (պետական՝ տարածքային և տեղական) պաշտոնական բանակցային հանդիպումներ: Համակարգված աշխատելու և կրկնություններից խուսափելու համար, ճանաչողական հանդիպումների ընթացքում համաձայնություններ են ձեռք բերվում մարզային պատասխանատուների (մարզպետ, մարզպետի տեղակալ, ոլորտային վարչության ղեկավարներ և այլն) և համայնքի ղեկավարության (համայնքապետ, քաղաքապետ, ավագանու անդամներ),

ինչպես նաև համայնքում գործունեություն իրականացնող միջազգային և տեղական կազմակերպությունների, անհատ բարերարների հետ:

ՀԶԾ-ի մշակման գործընթացի մասնակցայնությունն ապահովվում է համայնքային ընդհանուր ժողովներում:

Համայնքի ընդհանուր ժողով:

Նպատակը` ՀՀԶԾ -ի մշակման ընթացքում հրավիրվում է համայնքի երկու ընդհանուր ժողով, որոնցից առաջինը հետապնդում է իրազեկման, մոբիլիզացիայի և ֆոկլուս խմբերի ձևավորման, իսկ երկրորդը` ՀՀԶԾ-ի նախագծի քննարկման և հաստատման նպատակ:

3.Համայնքի տեսլականի ձևակերպում

Համայնքի տեսլականը գյուղի/քաղաքի ապագայի այն ցանկալի պատկերն է, որին հավաքականորեն ձգտում են համայնքի բոլոր անդամները:

4.Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություն

Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը վերլուծվում է տվյալների ուսումնասիրության աշխատանքային քննարկումների մեթոդով:

Առկա տեղեկատվության ուսումնասիրություն և վերլուծություն

Տարբեր կազմակերպություններից (համայնքապետարան, մարզպետարան, կառավարություն, միջազգային կազմակերպություններ, հասարակական միավորումներ և այլն) հավաքվում է համայնքին առնչվող առկա տեղեկատվությունը (պաշտոնական վիճակագրություն, միկրո սոցիոլոգիական հարցումներ և ՀՀ ՏԿԱԻ-ն –ի կողմից հաստատված և ներկայումս գյուղական համայնքների մասին տեղեկատվության հավաքագրման հարցաթերթ): Լուռու մարզի 2016-2019թթ զարգացման ծրագրի նախագծի դրույթները, համայնքի 2013-2016թթ քառամյա զարգացման ծրագիրը, միջազգային և պետական տարբեր կազմակերպությունների կողմից տվյալ համայնքում իրականացվող ծրագրեր և և համայնքին առնչվող այլ նյութեր:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

2016թվականի հոկտեմբերի 2-ին Լուռու մարզի Պուշկինո համայնքում տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունում, ընտրության արդյունքում համայնքապետ վերընտրվեց Սուրեն Գևորգի Ավետիսյանը ավագանու հինգ անդամներ՝

1. Առաքելյան Ժիրայր Հովհաննեսի
2. Ճշմարիտյան Կարեն Էլբրուսի
3. Ճշմարիտյան Սուսաննա Սերյոժի
4. Մկրտումյան Խալաթ Վաչագանի
- 5 Շահինյան Նունե Կարլենի

Պուշկինո համայնքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը՝ 5 հոգի:

